

1.2.4. Տրանսպորտ

Բեռնափոխադրումներ: 2001թ. հունվար-մայիսին հանրապետությունում, ըստ բեռնափոխադրումների իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և անհատ ձեռնարկատերերի բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը 2000թ. հունվար-մայիսի նկատմամբ նվազել է 3.3 %:

Բեռնափոխադրումների ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2001թ. հունվար-մայիս	2001թ. հունվար-մայիսը 2000թ. հունվար-մայիսի նկատմամբ, %-ով	2001թ. մայիս	2001թ. մայիսը 2001թ. ապրիլի նկատմամբ, %-ով
Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը, հազ.տոննա	1522.3	96.7	401.6	129.6
<i>այդ թվում՝</i>				
Երկաթուղային տրանսպորտով	423.4	80.8	118.9	107.5
<i>որից</i>				
արտահանվել են բեռներ	67.5	116.0	18.1	100.6
ներկրվել են բեռներ	292.1	76.7	68.6	79.4
ներհանրապետական փոխադրումներ	63.8	75.2	32.2	5.2 անգամ
ավտոտրանսպորտով	792.2	125.0	248.8	153.5
<i>որից</i>				
արտահանվել են բեռներ	37.3	151.0	10.6	117.8
ներկրվել են բեռներ	99.0	113.7	25.2	144.8
ներհանրապետական փոխադրումներ	655.9	125.6	213.0	156.6
օդային տրանսպորտով	4.5	100.0	0.8	80.0
<i>որից</i>				
արտահանվել են բեռներ	1.8	94.7	0.2	50.0
ներկրվել են բեռներ	2.7	103.9	0.6	100.0
խողովակաշարային տրանսպորտով	302.2	73.4	33.1	92.4

Երկաթուղային տրանսպորտ: 2001թ. հունվար-մայիսին, ըստ հաշվետվությունների տվյալների, ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 2000թ. հունվար-մայիսի նկատմամբ նվազել է 19.2%: Երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալում հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 69.0% (2000թ. հունվար-մայիսի 72.7% դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 15.9% (նախորդ տարվա հունվար-մայիսի 11.1 % դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 15.1% (նախորդ տարվա հունվար-մայիսի 16.2 % դիմաց):

Ըստ բեռների հիմնական տեսակների, 2001թ. հունվար-մայիսին 2000թ. հունվար-մայիսի նկատմամբ սև մետաղների ջարդոցի փոխադրման ծավալն ավելացել է 26.1%, իսկ հանքային շինարարական նյութերի փոխադրման ծավալը նվազել է 83.2 %, քիմիական և հանքային պարարտանյութերինը՝ 81.9 %, սև մետաղներինը՝ 78.6% ցեմենտինը՝ 54.9%, քարածխինը՝ 44.4% , հացահատիկի և աղացվող մթերքինը՝ 42.6%, նավթ և նավթամթերքինը՝ 17.8 %:


Վազոնների միջին օրական բեռնաթափումը հունվար-մայիսին կազմել է 42 վազոն և 2000թ. հունվար-մայիսի նկատմամբ նվազել է 7 միավորով, իսկ բեռնումը կազմել է 17 վազոն և մնացել անփոփոխ: Նույն ժամանակաշրջանում վազոնապտույտը կազմել է 13.4 օր և նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ արագացել է 2.5 օրով:

Ավտոմոբիլային տրանսպորտ: 2001թ. հունվար-մայիսին հանրապետությունում բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումների ծավալը 2000թ. հունվար-մայիսի ցուցանիշի նկատմամբ աճել է 25.0 %, որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 12.5 % (2000թ. հունվար-մայիսի 13.7 % դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 8.9 % (2000թ. հունվար-մայիսի 15.7 % դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 4.7 % (2000թ. հունվար-մայիսի 3.9 % դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 10.2 % (2000թ. հունվար-մայիսի 18.2 % դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 82.8 % (2000թ. հունվար-մայիսի 82.4 % դիմաց):

Օդային տրանսպորտ: 2001թ. հունվար-մայիսին, ըստ օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների տվյալների, օդային տրանսպորտով փոխադրված բեռների ծավալը կազմել է 4.5 հազ. տոննա և 2000թ. հունվար-մայիսի ցուցանիշի նկատմամբ մնացել անփոփոխ, որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 60.0 % (2000թ. հունվար-մայիսի 57.8 % դիմաց), իսկ հանրապետությունից արտահանված բեռների բաժինը՝ 40.0 % (2000թ. հունվար-մայիսի 42.2 % դիմաց):

Խողովակաշարային տրանսպորտ: 2001թ. հունվար-մայիսին խողովակաշարային տրանսպորտով հանրապետություն ներկրված բնական գազի բեռնափոխադրումների ծավալը 2000թ. հունվար-մայիսի ցուցանիշի նկատմամբ նվազել է 26.6 %:

Բեռնափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտային առանձին տեսակների 2001թ. հունվար-մայիսին (տոկոսներով)



2000թ. հունվար-մայիսին բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտը կազմել է 33.3 %, ավտոմոբիլայինը՝ 40.3 %, օդայինը՝ 0.3 %, խողովակաշարայինը՝ 26.1 %:

Բեռնաշրջանառություն: 2001թ. հունվար-մայիսին հանրապետությունում, ըստ բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և անհատ ձեռնարկատերերի բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը 2000թ. հունվար-մայիսի նկատմամբ նվազել է 24.9 %:

Բեռնաշրջանառության ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների


	2001թ. հունվար- մայիս	2001թ. հունվար- մայիսը 2000թ. հունվար-մայիսի նկատմամբ, %-ով	2001թ. մայիս	2001թ. մայիսը 2001թ. ապրիլի նկատմամբ, %-ով
Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը, մլն. տոննա-կմ այդ թվում՝				
Երկաթուղային տրանսպորտով	712.2	75.1	96.5	95.0
ավտոտրանսպորտով	113.9	80.5	28.7	97.6
օդային տրանսպորտով	15.2	104.8	3.6	133.3
տողովակաշարային տրանսպորտով	3.3	110.0	0.7	87.5
խողովակաշարային տրանսպորտով	579.8	73.4	63.5	92.4

Ուղևորափոխադրումներ: 2001թ. հունվար-մայիսին հանրապետությունում, ըստ ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և անհատ ձեռնարկատերերի ուղևորատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը 2000թ. հունվար-մայիսի ցուցանիշի նկատմամբ աճել է 8.3 %:

Ուղևորափոխադրումների ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2001թ. հունվար- մայիս	2001թ. հունվար- մայիսը 2000թ. հունվար-մայիսի նկատմամբ, %-ով	2001թ. մայիս	2001թ. մայիսը 2001թ. ապրիլի նկատմամբ, %-ով
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, հազ. մարդ այդ թվում՝				
Երկաթուղային տրանսպորտով	62232.4	108.3	12842.5	101.5
ավտոտրանսպորտով	377.9	130.8	102.9	113.7
օդային տրանսպորտով	49795.2	111.0	10209.6	101.4
Էլեկտրատրանսպորտով	233.1	123.1	53.9	107.8
Էլեկտրատրանսպորտով	11826.2	97.8	2476.1	101.6

Ուղևորափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտային առանձին տեսակների 2001թ. հունվար-մայիսին (տոկոսներով)



1. ԻՐԱՎԱՆ ՀԱՏՎԱԾ

2000թ. հունվար-մայիսին ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտինը կազմել է 0.5%, ավտոմոբիլային տրանսպորտինը՝ 78.2%, օդային տրանսպորտինը 0.3% և էլեկտրատրանսպորտինը 21.0%:

Էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունի մետրոպոլիտենով փոխադրված ուղևորների ծավալը, որը 2001թ. հունվար-մայիսին կազմել է 52.8 %, իսկ տրոլեյբուսով՝ 28.2%, տրամվայով՝ 17.6% և ճոպանուղով՝ 1,4 %:

Ուղևորաշրջանառություն: 2001թ. հունվար-մայիսին հանրապետությունում, ըստ ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և անհատ ձեռնարկատերերի ուղևորատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը 2000թ. հունվար-մայիսի նկատմամբ աճել 14.4 %:

Ուղևորաշրջանառության ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2001թ. հունվար-մայիս	2001թ.հունվար-մայիսը 2000թ. հունվար-մայիսի նկատմամբ, %-ով	2001թ. մայիս	2001թ.մայիսը 2001թ. ապրիլի նկատմամբ, %-ով
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորաշրջանառության ծավալը, մլն. ուղ-կմ	967.6	114.4	167.0	85.5
<i>այդ թվում՝</i>				
երկաթուղային տրանսպորտով	15.6	118.2	4.0	97.6
ավտոտրանսպորտով	684.0	112.0	100.2	75.2
օդային տրանսպորտով	219.1	127.8	52.5	109.8
էլեկտրատրանսպորտով	48.9	97.2	10.3	102.0

Տրանսպորտային պատահարներ: Հանրապետությունում 2001թ. հունվար-մայիսին, ըստ ՀՀ պետավտոտեսչության հաշվետվությունների տվյալների , ճանապարհատրանսպորտային պատահարները 2000թ. հունվար-մայիսի նկատմամբ աճել է 13.8 %:

Ճանապարհատրանսպորտային պատահարների ցուցանիշները

	2001թ. հունվար-մայիս	2001թ.հունվար-մայիսը 2000թ. հունվար-մայիսի նկատմամբ, %-ով	2001թ. մայիս	2001թ.մայիսը 2001թ. ապրիլի նկատմամբ, %-ով
Ճանապարհատրանսպորտային պատահարներ, ընդհանենը	338	113.8	76	98.7
Զոհվել են, մարդ	74	127.6	11	55.0
Վիրավորվել են ,մարդ	369	107.0	82	110.8